

## ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

\* \* \*

Մենակ, միշտ մենակ-ինչ երջանկութիւն,  
Մի գերերկրային բերկրութեամբ լցուած  
Լսում եմ մարող սրտիս բարախիւն,  
Համարում ամէն մի վայրկեանն անցած:

Հեռու աշխարհի անմիտ ժխորից,  
Ամէն խռովայոյզ կըքերից ազատ,  
Վշտիս անձնատուր ու անցաւակից  
Փայփայում եմ իմ տեհնչերն հարազատ

Ոհ, ինչ անպատում հոգեզմայլութեամբ  
Երազում եմ ես, այսպէս միայնակ,  
Իրեւ երկնային մի մոլար ջինջ ամսկ  
Ցնդել եթերքումն անհուն, կապուտակ.

Ինչպէս ձիւն մաքուր լեռան գաղաթին  
Արեի շողից հալուել կուզէի,  
Մարզեր շոյելով անցնել մեզմազին  
Ինչպէս սօսափիւն գարնան զեփիւի.

Կամ սիրով արբշիո, ինչպէս պատանին  
Մատաղ սիրունու գրկումը անուշ,  
Գըլուխրս դրած երկրի ջերմ կըծքին՝  
Իւր հետ յաւիտեան քուն լինել անյուշ . . .